Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 52-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԱՄՔ»

1.	Ծրագրի նպատակը	Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում և կազմակերպում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գևորգ և Սիրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի
4.	Ծրագիրը կատարողը	«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Մայմեխի խճուղի 8, ՀՎՀՀ՝ 06940684)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Մայմեխի խճուղի 8: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	63,482,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով տարեցներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, նրանց առօրյան հետաքրքիր դարձնելու համար բազմատեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների կազմակերպում, բժշկական օգնության տրամադրում և կազմակերպում, ըստ անհրաժեշտության հոգեբանական օգնության տրամադրման կազմակերպում 2023 թվականի ամբողջ ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և տնտեսական ծախսերը, ինչպես նաև՝ խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում՝

		1. Տարեցների տանը բնակվող տարեցների համար նպաստավոր պայմանների ստեղծում, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը՝		
		1) կոմունալ և կապի ծառայություն	8,425,000	դրամ
		2) շենքի շահագործում և պահպանում	1,000,000	դրամ
		2. Տարեցների խնամքի, հիգիենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, բժշկական օգնության տրամադրում և կազմակերպում, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը՝		
		1) սննդի, տնտեսական ապրանքների ձեռքբերում	22,142,610	դրամ
		2) հագուստի, անկողնային և կենցաղային պարագաների ձեռքբերում	600,000	դրամ
		3) մեքենասարքավորումների, տրանսպորտային միջոցների շահագործման և պահպանման ծախսեր	1,600,000	դրամ
		4) խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր)	20,376,290	դրամ
		5) դեղորայք, բժշկական և հիգիենիկ պարագաներ	2,300,000	դրամ
		6) մշակութային միջոցառումների կազմակերպում	200,000	դրամ
		3. Այլ ծախսեր (պարտադիր վճարներ՝ ավտոմեքենայի զույքահարկ ապահովագրություն, բժշկական լիցենզիայի պետական տուրք, բանկային ծախսեր, աշխատողների պարբերական բուժքննություն), նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը	337,000	դրամ
		4. Կազմակերպական ծախսեր, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը	6,501,100	դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների ծավալները կազմում են 37,181,610 դրամ, այդ թվում՝		
		1) գազամատակարարում	4,270,000	դրամ
		2) էլեկտրաէներգիայի մատակարարում	3,500,000	դրամ
		3) գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում և տեխնիկական անվտանգության փորձաքննություն	130,000	դրամ

		4)	հեռախոսակապի գծով ծառայություն	360,000	դրամ
		5)	աղբահանություն և դեռատիզացիոն աշխատանքների կատարում	165,000	դրամ
		6)	սննդամթերքի ձեռքբերում	20,942,610	դրամ
		7)	տնտեսական ապրանքներ, կենցաղային և հիգիենիկ պարագաների ձեռքբերում	1,200,000	դրամ
		8)	հագուստեղենի, կոշկեղենի ձեռքբերում	350,000	դրամ
		9)	անկողնային պարագաների ձեռքբերում	250,000	դրամ
		10)	շենքի շահագործման համար նյութերի ձեռքբերում և վերանորոգում	1,000,000	դրամ
		11)	տրանսպորտային միջոցների շահագործում (վառելիք)	1,100,000	դրամ
		12)	մեքենասարքավորումների, տրանսպորտային միջոցների ընթացիկ նորոգում և պահպանում	500,000	դրամ
		13)	դեղորայք, բժշկական հիգիենիկ պարագաների ձեռքբերում	2,300,000	դրամ
		14)	գրենական և գրասենյակային պիտույքների ձեռքբերում	144,000	դրամ
		15)	համակարգչային տեխնիկայի և հաշվապահական ծրագրի սպասարկում	200,000	դրամ
		16)	աշխատակազմի պարբերական բուժզննություն	170,000	դրամ
		17)	տարեկան աուդիտի անցկացում	600,000	դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման կազմակերպման ծախսերը կազմում են 6,501,100 դրամ, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժողության 10.24 %-ը: Այն իր մեջ ներառում է՝			
		1)	վարչական անձնակազմի աշխատանքի վարձատրություն	5,413,100	դրամ
		2)	գործուղումներ	144,000	դրամ
		3)	գրենական պիտույքների ձեռքբերում	144,000	դրամ
		4)	համակարգչային տեխնիկայի և հաշվապահական ծրագրի սպասարկում	200,000	դրամ
		5)	տարեկան աուդիտի անցկացում	600,000	դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակա-ռավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Լոռու մարզպետարան, տեղական ինքնակառավարման մարմիններ			

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ